Առաջարկի հարցման ծանուցում

Հոկտեմբերի 10, 2024թ.

Ներածություն

Սույն գրությամբ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն), ի դեմս Ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ), հայտարարում է կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի թողարկման ծառայությունների առաջարկի հարցման (այսուհետ՝ Առաջարկի հարցում) հրապարակման և ընտրության մրցակցային գործընթացի մեկնարկի մասին՝ համաձայն Հայաստանի օրենսդրության և միջազգային լավագույն փորձառության (այսուհետ՝ Ընտրության ընթացակարգ): Ընրության ընթացակարգի արդյունքում ՆԳՆ-ն նպատակադրված է կնքել ՀՀ-ում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի թողարկման և տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի (այսուհետ՝ ՊՄԳ ծրագիր) պայմանագիր:

ՊՄԳ ծրագրի հիմնական նպատակն է աջակցել Հայաստանի թվային փոխակերպմանը և բնակչությանը մատուցել բարձրակարգ ծառայություն՝ ձևավորելով կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի թողարկման և տրամադրման երկարաժամկետ պետություն-մասնավոր գործընկերություն:

Այս ծրագրի առանցքային նպատակներն են՝

- Ներդնել քաղաքացու փորձառության և ծառայությունների որակի նոր սերնդի ստանդարտներ, այդ թվում սպասելաժամանակի կրճատում, ճամփորդական և անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման ողջամիտ ժամանակահատված, ծառայությունների մատուցման նոր լուծումներ՝ բարելավելով սպասարկման սրահների ֆիզիկական պայմանները և դրանց տալ միջազգային ստանդարտներին համապատասխան լուծումներ:
- Համաշխարհային ստանդարտներին համապատասխան և անվտանգ ճամփորդական և անձը հաստատող փաստաթղթերի ձեռքբերման և կիրառման փորձի ընդլայնում՝ խթանելով հանրության թվային զարգացումը Հայաստանում: Այն ավելացնելու է նաև առաջադեմ թվային ծառայությունների և այլ ավտոմատացված գործընթացների կիրառելիությունը (օրինակ՝ անձի ինքնության վավերացում՝ ընտրությունների ընթացքում, սահմանահատումների ավտոմատացում և այլն):
- Հնամաշ ՏՏ ենթակառուցվածքի փոխարինում՝ անվտանգությունը, արդյունավետությունն ու գործառնական ռիսկերի կառավարման լուծումները բարելավելու, ինչպես նաև նորարական լուծումներ որդեգրելու նպատակով՝ շարունակաբար դրանք համապատասխանեցնելով ոլորտի լավագույն ստանդարտներին:

Առաջարկի հարցումը պատրաստվել է կիրառելի օրենքի շրջանակում և հաստատվել ՊՄԳ ծրագրի ընտրության ընթացակարգով ձևավորված համապատասխան Գնահատող հանձնաժողովի կողմից: Առաջարկի հարցման փաստաթուղթը կարգավորում է Ծրագրի ընտրության ընթացակարգի առաջարկի հայտերի փուլը, այդ թվում հայտերի ձևաչափին և բովանդակությանը վերաբերող պահանջները, հայտերը ներկայացնելու և դրանք գնահատելու կարգը, ինչպես նաև այս փուլին առնչվող այլ հարցեր: Առաջարկի հարցումն ուղղված է այն հայտատուներին, որոնք Ծրագրի որակավորման հարցման պահանջներին համաձայն որակավորվել են, որպեսզի մասնակցեն առաջարկի հարցման փուլին, ստորագրել և լիազոր մարմին են ներկայացրել գաղտնիության պահպանման փաստաթուղթ:

Առաջարկի հարցման կառուցվածքը

Կից փաթեթը բաղկացած է հետևյալ փաստաթղթերից.

1. **Առաջարկի հարցման** փաստաթուղթն ու հավելվածները.

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Տեղեկատվական թերթիկ
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Ժամանակացույց
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Տեխնիկատնտեսական հիմնավորման պատճենի հարցման օրինակելի
ձև
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Հայտի բովանդակությունը
ՀԱՎԵԼՎԱԾ 5. Հայտերի գնահատում
ՀԱՎԵԼՎԱԾ 6. Պայմանագրի նախագիծ
ՀԱՎԵԼՎԱԾ 7. Հուսալի բանկերին ներկայացվող պահանջներ
ՀԱՎԵԼՎԱԾ 8. Սահմանումներ և մեկնաբանություն

2. ՊՄԳ ծրագրի **տեխնիկական պահանջները,**
3. ՊՄԳ **պայմանագրի նախագիծը,**

Խնդրում ենք նկատի ունենալ, որ ՊՄԳ պայմանագիրը կվերջնականացվի և կստորագրվի ընտրության ընթացակարգի ամփոփումից և հաղթող հայտատուի հայտարարումից հետո:

Հայտերի ներկայացումը

Որակավորված հայտատուները պետք է ներկայացնեն իրենց հայտերը ոչ ուշ քան **2025 թ-ի հունվարի 8-ը, չորեքշաբթի, ժամը 18:00** (Երևանի ժամանակով):

Հայտը (1 (մեկ) տպագիր բնօրինակ, 1 (մեկ) տպագիր կրկնօրինակ, 2 (երկու) էլեկտրոնային կրկնօրինակներ (USB կրիչով)) պետք է ֆիզիկապես փոխանցվեն Ծրագրի գնահատող հանձնաժողովի քարտուղարին որակավորված հայտատուի լիազորված անձի միջոցով ոչ ուշ քան վերևում նշված ժամկետը՝ համաձայն Առաջարկի հարցման Գլուխ 5.3-ի՝ Հայտերի ներկայացումն ու գրանցումը:

Լիազոր անձը պետք է նախապես Գնահատող հանձնաժողովի քարտուղարին հայտի ներկայացումը կազմակերպելու վերաբերյալ ծանուցում ուղարկի, ինչպես նկարագրված է Առաջարկի հարցման Գլուխ 5.3-ում՝ Հայտերի ներկայացումն ու գրանցումը:

Ընտրության ընթացակարգի կազմակերպման գործընթացի կոնտակտային տվյալներ.

1. mcs@gov.am
2. passidppp@isaa.am
3. Lina.Petruskeviciute@lt.ey.com – սույն ՊՄԳ ծրագրի շրջանակում խորհրդատվական ընկերություն